

խոշտանկութիւնն եւ Եւրոպա փախչողը: Գարրիէլ քահանայ Պատկանեան թէպէտ իրաւամբ կ'ուզէր Մուրատեանի սխալը Ղուկաս կաթողիկոսի մասին, սակայն ինքն ալ այս Սարգիս վ. Թէքիրտաղցին կը շփոթէ մեր Շնորհալի Սարգիս Արքեպ. Սարաֆեանի հետ («Արարատ» 1875, էջ 174): Սակայն որովհետեւ 1773ին վախճանեալ մեր Սարգիս Սարաֆեանը 1780ին կաթողիկոսացող Ղուկասին հետ գործ չէր կրնար ունենալ, պէտք ենք փնտռել վերոյիշեալ Սարգիս վ. Թէքիրտաղցին, Ղուկասու (1780—1799) ժամանակակիցը, որուն գրուածքը կարգացեր է Փափազեան:

Հոս ալ մեղի օգնութեան կը հասնի Անտոնեան Միաբանութեան Գիւանը, ուր կը պահուին Սարգիս վ. Թէքիրտաղցւոյ նամակները, ինքնակենսագրութիւնը, նամակներու օրինակներ եւ անոր մասին տեղեկութիւններ, որոնք կը համաձայնին Փափազեանի աւանդածներուն: Ասոնց համեմատ՝ Սարգիս, որդի Պաղտասարեան Ստեփանի, ծնած է ի Թէքիրտաղ 22 Յունիս 1751ին եւ 23ին մկրտեալ եւ գրոշմեալ Ս. Յովհ. Աւետարանիչ Եկեղեցին Հայոց (վկայական մկրտութեան Տէր Կարապետ Կլայեկեան Թէքիրտաղցի քահանայի, որ երբեմն Աւագերէց Նոյն եկեղեցւոյն, գրեալ 23 Ապր. 1779 եւ կնքեալ): 1771 Նոյ. 5ին սարկաւագ ձեռնադրուած է հրամանաւ Թէքիրտաղի Առաջնորդ Յակոբ վ. ին (վկայական Նոյնին, գրեալ 9 Յունիս 1772 եւ կնքեալ, որուն ընթերցուածը՝ «Քի ծո